ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժնի ավագ մասնագետ Տաթևիկ Աշչյանի՝ 2024թ. հոկտեմբերի 17-ից 19-ը գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Տաթևիկ Աշչյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժնի ավագ մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2024 թվականի հոկտեմբերի 17-ից 19-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝

ՌԴ ֆինանսների նախարարություն, ք. Մոսկվայի կառավարություն

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Մոսկովյան 8-րդ ֆինանսական համաժողովին

5. Քննարկված թեմաները՝

ՌԴ կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչները ներկայացրել են բյուջեի թվայնացման գործընթացը ՌԴ-ում՝ որպես պետական կառավարման կատարելագործման առանցքային խթանիչներից մեկը: Կարևորվել են դրված նպատակներին և թիրախներին հասնելու ջանքերը, քննարկվել կիրառվող մեթոդների և գործիքների արդյունավետությունը, ինչպես նաև անդրադարձ կատարել դեռևս 2011թ. ներդրված «Էլեկտրոնային բյուջե» հայեցակարգին, որը ՌԴ հանրային ֆինանսների ոլորտում թվային փոխակերպման մեկնարկն է հանդիսացել:

Միաժամանակ նշվել է, որ հանրային ֆինանսների թվայնացման շնորհիվ բյուջեի կատարման արդյունավետությունն ու որակը այժմ տեղափոխվել են այլ հարթություն: Համակարգային լավարկումները շարունակաբար գտնվում են

կառավարության ուշադրության ծիրում, քանի որ թվային տեխնոլոգիաները շարունակում են ներմուծվել կյանք և արմատապես փոխել այն՝ ընձեռելով նոր հնարավորություններ: Տվյալների բազան, արհեստական ինտելեկտը, խելացի պայմանագրերը, թվային պրոֆիլները ազդում են թվայնացման տեմպերի և հանրային ֆինանսների կառավարման գործընթացում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման խորության վրա:

Առանձնահատուկ կերպով նշվել է, որ ներկայումս մշակվում է բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման նոր հայեցակարգ, որը կսահմանի հանրային ֆինանսների ոլորտի զարգացման վեկտորները մինչև 2030 թվականը:

ՌԴ ֆինանսների նախարարության, կենտրոնական բանկի, ՊԵԿ-ի և «Խնայբանկի» պաշտոնատար անձինք մանրամասն ներկայացրել են բյուջեի թվայնացման ուղղություններով իրականացված և ընթացիկ աշխատանքները:

Հայկական կողմը նույնպես ներկայացրել է ՀՀ-ում բյուջետային առաջնահերթությունների հետ կապված հիմնահարցերը, թվայնացման գործընթացի իրականացմանն ուղղված քայլերը, հանդես է եկել արդյունավետության բարձրացման մի շարք առաջարկներով:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարության գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի հետ նշված ոլորտում՝ փոխադարձ տեղեկացնելով իրականացվող քայլերի մասին, և շարունակել փոխհամաձայնեցված ծրագրերի իրականացումը ոլորտային առանձին մասնագետների հետ:

Ստորագրությունը՝

22.10.2024թ.